ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 1986 թվականի դեկտեմբերի 06-ին

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 14

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՏՆՁԳՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հոդված 189.28. Առանց վարձութային վկայականի ֆիլմի տարածումը

1. Առանց վարձութային վկայականի ֆիլմի տարածումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ տարածողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ տարածողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

«Հոդված 189.29. Բարձրագույն կրթության բնագավառում օրենսդրության պահանջները խախտելը

1. Օրենսդրությամբ սահմանված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմին կամ մանկավարժներին կամ ուսումնական տարածքին կամ լաբորատոր կամ ուսումնամեթոդական ապահովվածության կամ գրադարանային-տեղեկատվական համակարգին կամ ուսումնաարտադրական պրակտիկայի բազային ներկայացվող պահանջները կամ լիցենզավորման կարգով նախատեսված այլ պահանջները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացրած հայտի հիմքով իրեն հատկացված սովորողների (ըստ կուրսերի) նախատեսվող սահմանային թիվը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով չափով:

4. Մեկ ուսումնական տարվա ընթացքում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված հիմքերով երկրորդ անգամ նախազգուշացվելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկ չափով:

5. Օրենքով նախատեսված խախտման համար պետական կառավարման լիազոր մարմնի կիրառած նախազգուշացմամբ սահմանված ժամկետներում այդ խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով :

7. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում երրորդ և ավելի անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

8. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին մասի) սահմանված արարքներից որևէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածով սահմանված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:

Գ Լ ՈՒ Խ 17

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Հոդված 244.23. Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսաչական մարմինը

1.Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 182.7-րդ և 189.29-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը: